



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ. փոստ kotayk@mta.gov.am

Ու Ղ Ե Ր Ձ

Թատերական արվեստի գործիչներ և թատերասեր հասարակություն,

Իմ ջերմագին ողջույնն ու շնորհավորանքներն եմ հղում ձեզ՝ որպես մարդկանց, ում գործը մշակույթին ու արվեստին անմնացորդ նվիրվելն է:

Հայ թատրոնը մեր ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչն է, իսկ թատերական գործիչները՝ ազգային ինքնության կրողները:

Ցանկանում եմ, որ այն ավանդույթները, որոնք ժառանգել եք թատրոնի մեծ վարպետներից, այսօր էլ պատվով և պատասխանատվությամբ ծառայեցնեք՝ ի նպաստ հոգևոր արժեքների տարածման և ազգային ինքնության պահպանման:

Այսօր ոչ միայն ձեր, այլ նաև մեր՝ թատերասեր հասարակության տոնն է, ուստի մաղթում եմ, որ հանդիսատեսի ծափերը մշտապես ուղեկից լինեն ձեզ: Շարունակեք արվեստի ուժով հոգևոր բավարարվածություն պարգևել հայ հանդիսատեսին՝ ձեր թիկունքին զգալով նաև պետության սերն ու հոգածությունը:

Թատրոնի միջազգային տոնի կապակցությամբ առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել Կոտայքի մարզի բոլոր թատերական գործիչներին՝ Հրազդանի Դրամատիկական թատրոնի ողջ անձնակազմին, Կոտայքի մարզում գործող թատերական խմբերին և ստուդիաներին՝ մաղթելով առողջություն, անսպառ եռանդ, նորանոր ստեղծագործական վերելքներ և չղաղարող ծափողջույններ:

Հարգանքով՝

Ռ. Պետրոսյան